2003, ՕԳՈՍՏՈՍ Ա, ԹԻՎ 15 (155)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

# ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ



Սուրբ Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոնը Հայ Եկեղեցու հինգ տաղավար տոներից է, այն տոնում ենք օգոստոսի 15-ի մոտակա կիրակի օրը (այս տարի՝ օգոստոսի 17-ին):

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչելությունից հետո Աստվածամայրը, Իր Որդու պատգամին հնազանդ (Հովհ. ԺԹ 26-27), շուրջ 15 տարի ապրեց Հովհաննես Աստվածաբան առաքյալի խնամատարության ներքո: Միածին Որդու համբարձումից հետո Աստվածամայրը օրեր ու գիշերներ հարատեւում էր պահքի ու աղոթքի մեջ:

Գողգոթա կատարած իր այցելություններից մեկի ժամանակ Աստվածամոր առջեւ հայտնվում է Գաբրիել հրեշտակապետն ու ավետում սբ. Աստվածածնի՝ երկրային աշխարհից դեպի վերին՝ երկնային Երուսաղեմ վերափոխվելու, ինչպես նաեւ դրա ժամանակի մասին: Վերադառնալով տուն՝ Աստվածածինն այդ մասին պատմում է առաքյալներին:

Այսպիսով, սբ. Կույսը, պատրաստվելով երկնային աշխարհ ճանապարհվելուն, պատվիրեց, որ իրեն թաղեն Գեթսեմանիի ձորակում: Վերջապես լրացավ այն ժամը, երբ պետք է կատարվեր Նրա՝ երկրից երկինք վերափոխումը:

Առաքյալները շրջապատել էին այն զարդարված մահիճը, ուր ընկողմանել էր Աստվածամայրը:

Հանկարծ շողաց չտեսնված մի լույս: Ներկաները սարսափեցին, երբ սենյակի վերեւում՝ ճառագայթների ներքո, հայտնվեց Հիսուս Քրիստոսը՝ հրեշտակների ու սրբերի ուղեկցությամբ:

Տեսնելով իր Որդուն՝ հրեշտակների զորքով շրջապատված, Աստվածամայրը թեթեւորեն բարձրացավ մահճից, խոնարհվեց Տիրոջը եւ հանգիստ, ասես քնի մեջ, հոգին ավանդեց իր Միածին Որդու ձեռքը:

Երբ հանդիսավոր թափորը՝ սուրբ առաքյալների ու մյուս հավատացյալների ուղեկցությամբ, մահիճը տանում էր դեպի Գեթսեմանի, հանկարծ երկնքում մի ընդարձակ, լուսափայլ ու պսակաձեւ ամպ գոյացավ եւ սկսեց ուղեկցել թափորը:

Երուսաղեմի անհավատ բնակիչները թաղման թափորի անսովոր փառահեղությամբ զարմացած եւ հասկապես Հիսուսի մորը տրված մեծարանքի հանդեպ չարացած, այդ ամենի մասին հայտնեցին հրեա քահանայապետներին ու դպիրներին: Վերջիններս անմիջապես իրենց ծառաներին ու զինվորներին ուղարկեցին ցրելու թափորն ուղեկցողներին:

Հուզված ու գրգռված ժողովուրդը եւ զինվորները նետվեցին քրիստոնյաների կողմը, բայց այդ պահին պսակաձեւ ամպն իջավ ներքեւ ու կարծես պատնեշի նման շրջապատեց թափորը: Չնայած հետապնդողներին լսելի էին երգերն ու քայլերի ձայները, բայց ոչինչ տեսանելի չէր, եւ նրանցից շատերը կուրացան: Կուրացածներն Աստվածամոր մահճին զղջումով դիպչելուց հետո վերստացան իրենց մարմնավոր տեսողությունը:

Մի հրեա քահանա էլ նետվեց մահճի վրա՝ այն գետնին տապալելու դիտավորությամբ: Սակայն հազիվ էր դիպել ձեռքերով, երբ հանկարծ հրեշտակն աննյութեղեն թրով հատեց նրա երկու ձեռքերը: Կտրված մասերը մնացին մահճին կպած, իսկ ինքն ահաղակով գետնին տապալվեց՝ խորապես զղջալով իր գործածի համար: Ուստի Պետրոս առաքյալը կարգադրեց նրան մոտենալ կտրված ձեռքերին: Բժշկվելուց հետո նա եւս միացավ թափորին, իսկ հետագայում դարձավ Քրիստոսի հետեւորդներից մեկը:

Այսպես Գեթսեմանի հասնելով՝ սբ. Կույսի մարմինն ամփոփեցին քարայրում եւ մուտքը մի հսկա քարով ծածկեցին: Երրորդ օրը Գեթսեմանի եկավ Բարթողոմեոս առաքյալը եւ սկսեց հուսակտուր ողբալ ու լաց լինել, որ չարժանացավ Սուրբ Աստվածածնին վերջին հրաժեշտը տալուն եւ նրանից օրհնություն ստանալուն: Առաքյալները որոշեցին բացել քարայրի մուտքը, որպեսզի նա կարողանա վերջին հրաժեշտը տալ: Բայց մուտքից քարը հեռացնելուց հետո բոլորը տեսան եւ հաստատեցին, որ Աստվածամոր մարմինն այնտեղ չէր, այլ վերափոխվել էր:

Բարթողոմեոս առաքյալին էր վիճակված Աստծու իմաստուն նախախնամությամբ միջոց դառնալ Աստվածամոր վերափոխումը բացահայտելուն: Քարայրում միայն սբ. Կույսի հանդերձանքն էր:

Ըստ ավանդության՝ ի մխիթարություն Բարթողոմեոսի՝ նրան հանձնեցին այն կենդանագիր պատկերը, որը սբ. Կույսը տվել էր Հովհաննես ավետարանչին: Մովսես Խորենացու վկայությամբ՝ Բարթողոմեոսն այն Հայաստան բերեց եւ զետեղեց Անձեւացյաց գավառի Դարբնոցքար կոչված տեղում, ուր հետագայում, ի պատիվ Տիրամոր պատկերի, կուսանոց հիմնվեց:

## ԽԱՂՈՂՕՐՀՆԵՔ

Հին Ուխտում տարվա առաջին բերքը տարվում էր տաճար եւ ընծայվում Աստծուն: Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին օրհնության համար, որպես այգեքաղի երախայրիք, նախապատվությունը տալիս է խաղողին. աշխարհակործան ջրհեղեղից հետո Նոյ նահապետը Արարատ լեռան ստորոտի դաշտավայրում այգի է տնկում եւ խաղողագործությամբ զբաղվում: Այդ ժամանակից ի վեր խաղողը դառնում է Արարատյան դաշտավայրի զարդը, համարվում պտուղներից ազնվագույնը եւ կոչվում պտղոց արքա:

Մեր Տերն Ինքն Իրեն նմանեցրել է խաղողենուն (տե՛ս Հովհ. ԺԵ 1-8). այն խորհրդապատկերն է ս. Աստվածածնի, խորհրդանիշը Նոր Ուխտի Քրիստոսահաստատ Սուրբ եկեղեցու: Այս առումով էլ Հայ եկեղեցում Աստվածամոր Վերափոխման տոնակատարության օրը Սբ. Պատարագից անմիջապես հետո տեղի է ունենում խաղողօրհնեքի արարողություն:

Ինչպես որթն իր կենարար հյութերով աճեցնում ու հասունացնում է ողկույզները, սույնպես եւ Բանն Աստված Իր սուրբ մոր ամենամաքուր արյունից Իր մարմինը կազմեց ու անճառապես միավորեց Իր Աստվածությանը: Ինչպես խաղողենին իր պտուղների արյամբ՝ գինիով, մարդկային ազգին ուրախարար ու կազդուրիչ հյութ է տալիս, նմանապես եւ Աստվածածնի կենդանարար Ողկույզը՝ Քրիստոս Աստված Իր արյունն է պարգեւում յուրայիններին, ինչը սուրբ է, քավչարար ու կեցուցիչ՝ հավիտենական կյանքի պատճառ:

Օրվա ընթերցվածքում հիշատակվում է, որ Աստված ստեղծեց բուսականությունն ու պտղատու ծառերը, ապա Ադամին ու Եվային պարգեւեց ամբողջ դրախտը, բայց նրանք, օրինազանց գտնվելով, դրախտից արտաքսվեցին, իսկ երկիրը նրանց պատճառով անիծվեց: Սակայն Աստվածորդու՝ աշխարհ գալով անեծքի կապանքը վերացավ, եւ մարդիկ ձերբազատվեցին մեղքի ու մահվան ծառայությունից:

Խաղողի օրհնության ընթացքում աղոթքներ են հղվում ոչ միայն պտղի, այլեւ դրա մշակողի, ընծայողի, հողագործի եւ հողի համար՝ Արարչից խնդրելով առատ, բերրի, կարկուտից ու սառնամանիքից զերծ տարի:

Այսպիսով, խաղողօրհնեքն առհասարակ Աստծուց մարդուն պարգեւված բերքի՝ բոլոր տեսակի պտուղների օրհնությունն է:



*Վեհափա՛ռ Տեր*

*Ամենախոնարհ մարդն իսկ թույլ է տալիս տարվա մեջ գոնե մեկ անգամ սիրո ու գնահատանքի ջերմ խոսքեր հղեն իրեն, փառքի համար խորին շնորհակալություն հայտնեն, իսկ գալիքի՝ մաղթեն ամենալավը, ամենաբարին:*

*Յուրաքանչյուր մարդ՝ որպես մի պարզ մարդիկ, պատասխանատու է իր զորաբանակի առաջ, ուրեմն որքան առավել պատասխանատու է այդ զորաբանակի առաջնորդը: Ուստի Ձերդ Սրբության ծննդյան օրն առիթ ընդունելով՝ մաղթում ենք Ձեզ՝ հայ ժողովրդի հոգեւոր զորաբանակի հովվապետին, անսպառ առողջություն ու արեւշատություն, աղոթում, որ Տեր Աստված Ձեզ Ձեր բոլոր օրերում օգնական լինի՝ աստվածահաճո ու ազգանվեր առաքելության մեջ, առավել սրի Ձեր միտքն ու աչքը՝ Ձեզ հետ բռնած մեր հավատքի ճամփան անխոտոր անցնելու համար, բազմապատկի Ձեր կորովն ու եռանդը՝ աստվածահաստատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հավիտենական անհանգչելի փառքը պահելու համար:*

***Մաղթելով ի համբույր Ձերդ օծեալ սուրբ աջոյն՝***
***ՔԴԿ-ի եւ «Քրիստոնյա Հայաստան» թերթի աշխատակազմ***

# ՋՐՎԵԺԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐՁԱՎ «ՍԻՆԴԵՍՄՈՍԻ» ԱՆԴԱՄ



Հուլիսի 14-22-ը Ալբանիայի Դյուրես քաղաքի մոտ գտնվող Ս. Վլասի († 316, Սեբաստիա, Հայաստան) գողտրիկ վանական համալիրում *«...դուք Իմ վկաները պիտի լինեք»* (Գործք Ա 8) խորագրով տեղի ունեցավ «Սինդեսմոսի» XVII հոբելյանական համընդհանուր համաժողովը, որին մասնակցում էին շուրջ 40 երկրից ժամանած ավելի քան 150 ներկայացուցիչ: Համաժողովի նպատակն էր մեկ անգամ եւս վկայել եւ հաստատապես ամրագրել այն պարզ ճշմարտությունը, որ մենք՝ ուղղափառ երիտասարդներս, անբաժանելի ու անքակտելի անդամներն ենք **Մեկ, Ընդհանրական, Առաքելական եւ Սուրբ եկեղեցու,** ինչպես նաեւ նոր ուղիներ ու ճանապարհներ գտնել երկրիս վրա «Սինդեսմոսի» կոչումն առավել ամբողջական իրականացնելու համար՝ *«ծառայելով եկեղեցուն եւ Նրա միությանը, վկայությանը, առաքելությանը եւ աշխարհի կյանքի վերանորոգմանը»* («Սինդեսմոսի» Սահմանադրություն, Հոդված 2.1): Հոբելյանական այս արարողությանը մասնակցեցին նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տիգրան արկ. Բաղումյանը եւ Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցու երիտասարդաց միության ատենապետուհի Լիլիթ Սարգսյանը:

«Սինդեսմոս»-ը հունարեն բառ է, որ նշանակում է «կապ», այս դեպքում՝ «միության կապ» ուղղափառ երիտասարդների միջեւ: Այստեղ ամենուրեք տիրում են քրիստոնեական սերն ու փոխադարձ վստահությունը միմյանց նկատմամբ: Այն հիմնադրվել է 1953 թ. Ֆրանսիայում, թեպետ ուղղափառ երիտասարդներին համախմբող այս կազմակերպության արմատները ավելի խորն են:

Դեռեւս 1920-1953 թթ. տեղի են ունեցել բազմաթիվ հանդիպումներ ուղղափառ զանազան երիտասարդական կազմակերպությունների միջեւ, որոնք էլ հետագայում հիմք են հանդիսացել «Սինդեսմոսի» ստեղծմանը: Ընդհանրապես ուղղափառ երիտասարդներին համախմբելու այս վեհ գաղափարի առաջին ջատագովները երկու ռուս տարագիր աստվածաբաններ էին՝ հայր Բարսեղ Զենկովսկին եւ հայր Լեոն Զանդերը: Եվրոպայում բնակություն հաստատած ռուս ուղղափառ աստվածաբանների նպատակն էր ուղղափառ հավատքի սերմանումը երիտասարդ սերնդի մեջ ու «Հավատո հանգանակի» «Ընդհանրական» եզրի իրագործումը կյանքում: 1953 թ. ուղղափառ նշանավոր աստվածաբան Ջոն Մեյենդորֆը, խոսելով «Սինդեսմոսի» մասին, ասել է. *«Ընդհանրականությունն այլեւս վերացական վարդապետության խնդիր չէ, որ շարադրված է կատեխիզմների մեջ, այլ մի կենդանի իրականություն, առանց որի ուղղափառ քրիստոնեական կյանք գոյություն չունի»:*

Այսօր «Սինդեսմոսի» անդամ են 125-ից ավելի ուղղափառ երիտասարդական կամակերպություն, ուսումնական եւ աշխարհիկ հաստատություններ՝ շուրջ 42 երկրից: 1961 թ. սկսած «Սինդեսմոսի» աշխատանքներին մասնակցել են նաեւ Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչները: Մասնավորապես նույն թվականին տեղի ունեցած «Սինդեսմոսի» V համաժողովին մասնակցել են հայր Գարեգին Սարգսյանը (հետագայում՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոս) ու Ղպտի Ուղղափառ եկեղեցու հայր Անտոնիոս Ամինը: Հետաքրքիր է, որ 1936 թ. կատարված մի լուսանկարում, ուր պատկերված են Ուղղափառ կրթականների միջազգային երկրորդ կոնգրեսի անդամները, հանդիպում ենք նաեւ Նինա Ներսիսյանի անվանը, որի մասին, ցավոք, մենք այլ մանրամասներ չգիտենք: Նշենք, որ 1999 թ. Ֆինլանդիայում տեղի ունեցած «Սինդեսմոսի» XVI համաժողովին Հայ Առաքելական եկեղեցու կողմից մասնակցել է Միքայել արկ. Մելիքյանը (այժմ՝ Տ. Վահրամ քհն. Մելիքյան):

Հուլիսի 15-ին համաժողովի բոլոր անդամները եկեղեցում մասնակցեցին Առավոտյան ժամերգությանը, իսկ այնուհետեւ՝ Ս. Պատարագի սրբազան արարողությանը: Ս. Պատարագից հետո պատարագիչ հոգեւորականը բարի գալուստ մաղթեց համաժողովի մասնակիցներին՝ անդրադառնալով ս. Վլասի վանական համալիրի պատմությանը, անցած դժվարին ուղուն, Ալբանիայի Ուղղափառ եկեղեցու առաջ ծառացած ներկա մարտահրավերներին ու համառ աշխատանքի շնորհիվ ձեռք բերված հաջողություններին:

Համաժողովի առաջին նիստն սկսվեց միասնական «Տերունական աղոթքով», որից հետո բացման խոսքով հանդես եկավ Տիրանայի եւ Համայն Ալբանիայի Անաստասիոս արքեպիսկոպոսը: Նա բարի գալուստ մաղթեց ներկաներին՝ հանգամանալից անդրադառնալով եկեղեցու կյանքում երիտասարդներին վերապահված կարեւոր դերին: Այնուհետեւ «Սինդեսմոսի» ընդհանուր քարտուղար Ռեբեկա Հուկուեյն ընթերցեց համաժողովին ուղղված՝ եկեղեցու գահակալների ողջույնի խոսքերը: Ողջույնի խոսքեր էին հղել Տիեզերական Պատրիարք Բարթուղիմեոս Ա-ն, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Ալեքսի Բ Պատրիարքը, Հնդիկ Մալաբար եկեղեցու Գահակալ Մար Բասիլեոս Թովմաս Մաթեոս Բ-ն ու այլք: Բոլոր առաջնորդներն էլ իրենց օրհնության խոսքերում արժեւորում եւ գնահատում էին ուղղափառ երիտասարդների ընկերակցության գործունեությունը՝ արգասաբեր եւ պտղաբեր տարիներ մաղթելով նրանց՝ հանուն Քրիստոսի եկեղեցու միության ու պայծառացման:

Կեսօրին բոլոր մասնակիցները հատկացված տեղերում ցուցադրեցին իրենց երիտասարդական կազմակերպությունների մասին պատմող լուսանկարներ, թերթոններ, բուկլետներ, ձայնասկավառակներ եւ դիդակտիկ այլ նյութեր: Իր ուրույն տեղն ուներ նաեւ Հայ Առաքելական եկեղեցուն վերապահված մասը, ուր մասնավորապես ներկայացված էին Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու հատկապես Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցու երիտասարդաց կազմակերպությունը՝ լուսանկարներով, տպագիր նյութերով, «Սաղմոս» երգչախմբի լազերային սկավառակով եւ այլ նյութերով: Միով բանիվ՝ այդ փոքրիկ անկյունն անխոս պատմում էր քրիստոնյա Հայաստանի եւ նրա երիտասարդաց միություններից մեկի արգասաբեր գործունեության մասին: Զարմանալի էր, բայց փաստ, որ շատերն առաջին անգամ էին լսում Հայոց աշխարհի եւ առաքելահաստատ մեր եկեղեցու մասին: Օգտվելով պատեհ առիթից՝ ջանում էինք նրանց պատմել Հայաստանի, նրա պատմության, հարուստ մշակույթի, առաքելահիմն եկեղեցու, նրա գանձերի, սրբերի, ծիսապաշտության եւ այլնի մասին: Վստահաբար նմանատիպ հավաքներն են, որ խթանում են համագործակցության ոգին երիտասարդների մեջ եւ հույս ներշնչում ապագայի համար, ինչպես նաեւ նոր մտահղացումներ եւ ծրագրեր ծնում մեր մեջ:

*Շարունակությունը՝ էջ 3*

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Եվրոպայի եկեղեցիների կոնֆերանսի 12-րդ գլխավոր համագումարը Նորվեգիայի Թրոնդհայմ քաղաքում

Հունիսի 25-ից հուլիսի 2-ը Նորվեգիայի Թրոնդհայմ քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի եկեղեցիների կոնֆերանսի (ԵԵԿ)-ի 12-րդ գլխավոր համագումարը: Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, որ 1977 թ. անդամակցում է եվրոպական եկեղեցիները միավորող էկումենիկ այս կազմակերպությանը, իր մասնակցությունը բերեց համագումարին: Հայկական պատվիրակության կազմում էին Հունաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ոսկան արք. Գալփաքյանը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը, եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղանի կոորդինատոր Կարեն Նազարյանը, էկումենիկ տեղեկատվական կենտրոնի ծրագրերի տնօրեն Նաիրա Մարտիրոսյանը: ԵԵԿ-ի վարչության կողմից համագումարի ծիսական արարողությունների կազմակերպիչ մարմնի մեջ էր Շվեյցարիայի հայոց հոգեւոր հովիվ Տ. Աբել քհն. Մանուկյանը:

«Հիսուս Քրիստոս բուժում է եւ հաշտեցնում. մեր վկայությունը Եվրոպայում» թեմայով հերթական այս համագումարի նպատակն էր քննարկել եկեղեցիների միջեւ առկա աստվածաբանական եւ դավանաբանական խիստ տարբերությունների հաղթահարման ուղիները՝ հանուն Եվրոպայի հավատացյալ ժողովուրդների միջեւ միասնության հաստատման:

Բացման արարողությունը տեղի ունեցավ հունիսի 26-ին Թրոնդհայմի Նիդարոս մայր տաճարում, որին ներկա էին Նորվեգիայի Հարալդ թագավորը եւ վարչապետը, քարոզիչն էր Բարթուղիմեոս Ա Տիեզերական պատրիարքը:

Արարողության ընթացքում եկեղեցիների միության խորհրդանիշ դարձավ մեկ ամանում հավաքված ջուրը, որ տարբեր պատվիրակություններ բերել էին իրենց հետ:

Համագումարի ընթացքում լսվեցին 15 թեմատիկ զեկույցներ՝ նվիրված եկեղեցիների հաշտեցման գործընթացներին, ինչպես նաեւ այնպիսի արդիական խնդիրների, ինչպիսիք են գլոբալիզացիան, կրոնների միջեւ երկխոսությունը եւ այլն:

Համագումարի ընթացքում ընտրվեց նաեւ ԵԵԿ 40 անդամից բաղկացած կենտրոնական նոր կոմիտե, որտեղ առաջիկա 6 տարվա ընթացքում Հայ եկեղեցին կներկայացնի Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Համագումարի օրերին մատուցվեց երեք Պատարագ՝ ուղղափառ, հայկական եւ բողոքական ծեսերով: Հայոց Պատարագի հաջորդ օրը կատարված առավոտյան ժամերգության հիմքում եւս հայկական ժամերգությունն էր:

Համագումարի փակման արարողությունը տեղի ունեցավ Նիդելվան գետի ափին: Քարոզիչն էր Քենթրբերիի Արքեպիսկոպոս գերաշնորհ Ռոուան Ուիլիամսը: Արարողության ընթացքում ուղղափառ ծեսով օրհնվեց տարբեր երկրներից բերված ջուրը եւ հեղվեց Նիդելվան գետի մեջ: Նիդելվանի ջրերն օրհնվեցին նաեւ հայկական մյուռոնով:

Հայ եկեղեցին համագումարին բերել էր նաեւ իր նվերը: Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի եւ էկումենիկ տեղեկատվական կենտրոնի աշխատակիցների ջանքերով կազմված «ԵԵԿ-ի անդամ եկեղեցիները» անգլերեն գիրքը բաժանվեց բոլոր եկեղեցիների պատգամավորներին:

### Տ. Տարոն եպս. Ճերեճյանը պարգեւատրվեց «Սբ. Ներսես Շնորհալի» շքանշանով



Օգոստոսի 5-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը Հայ եկեղեցու «Սբ. Ներսես Շնորհալի» պատվո շքանշան հանձնեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբան Տ. Տարոն եպս. Ճերեճյանին՝ ի գնահատումն սրբազան հոր ազնիվ ու բազմամյա հոգեւոր ծառայության:

Պարգեւատրման առիթը Տարոն սրբազանի ձեռնադրության 40-ամյակն էր:

Հայրապետական սրբատառ կոնդակն ընթերցեց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Շքանշանի հանձնման հանդիսավոր արարողությանը մասնակցում էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբան հայրեր:

Այնուհետ սրբազան հայրն իր իսկ ցանկությամբ անցնում է վաստակած հանգստի:

### Տ. Դանիել աբեղա Ֆընտըգյանին շնորհվեց մասնավոր վարդապետության աստիճան

Օգոստոսի 7-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում տեղի ունեցավ Նյու Յորքի «Սբ. Ներսես» ընծայարանի տեսուչ Տ. Դանիել աբղ. Ֆընտըգյանի վարդապետական թեզի պաշտպանությունը: Քննիչ հանձնախմբի կազմում էին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Մայր Աթոռի վարչակազմակերպչական գործերի կառավարիչ Տ. Փառէն եպս. Ավետիքյանը եւ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը: Քննիչ հանձնախումբը «եկեղեցու նավակատիքի հնագույն արարողությունը» պատմաբանասիրական, ծիսական եւ աստվածաբանական ուսումնասիրության համար հայր Դանիելին արժանի համարեց Հայ եկեղեցու մասնավոր վարդապետության կոչման:

Նույն օրը Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցավ մասնավոր վարդապետական աստիճանի տվչության արարողություն՝ ձեռամբ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի: Եկեղեցական արարողության ընթացքում նորընծա վարդապետին տրվեց վարդապետական աստիճանի եւ իմաստության խորհրդանիշ հանդիսացող օձագլուխ գավազան: Մասնավոր վարդապետության աստիճանով նրան տրվեց Սբ. Գիրքը եւ եկեղեցու դավանանքը քարոզելու եւ մեկնելու իշխանություն:



#### Տ. ԴԱՆԻԵԼ ՎՐԴ. ՖԸՆՏԸԳՅԱՆ

Ծնվել է 1962 թ. ԱՄՆ Տեքսաս նահանգում:

1980-1985 թթ. սովորել է Նյու Յորք նահանգի պետական համալսարանում՝ ստանալով ֆիզիկոսի բակալավրի աստիճան: Զուգահեռաբար նույն համալսարանում ուսանել է երաժշտության պատմություն:

1985-1989 թթ. սովորել է Նյու Յորքի «Սբ. Ներսես» ընծայարանում: Ավարտելով ընծայարանը՝ պաշտպանել է թեզ՝ «Մեծացուսցէ» շարականների աստվածաբանական ուսումնասիրությունը» թեմայով: Զուգահեռաբար հաճախել է Սբ. Վլադիմիր օրթոդոքս ճեմարան:

1986-1990 թթ. սովորել է նաեւ Նյու Յորք քաղաքի համալսարանի երաժշտության բաժնում: 1990 թ. ստացել է երաժշտության տեսության եւ պատմության մագիստրոսի կոչում՝ պաշտպանելով թեզ՝ «Կլավդիո Մոնտեվերդիի մադրիգալների 8-րդ գիրքը» թեմայով:

1989 թ. սեպտեմբերի 14-ին՝ Սբ. Խաչի տոնին, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Թորգոմ արք. Մանուկյանի:

1990 թ. ժամանել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածին եւ հայագիտության ու եկեղեցագիտության մասնավոր դասընթացներ անցել:

1992-1997 թթ. սովորել է Հռոմի Պապական արեւելագիտության ինստիտուտի ծիսագիտության բաժնում: 1997 թ. ստացել է դոկտորական աստիճան՝ պաշտպանելով թեզ՝ նվիրված Ստեփանոս եպս. Սյունեցու ժամակարգության մեկնությանը:

1997 թ.՝ Սբ. Խաչի տոնին, Նյու Յորքի Սբ. Վարդան առաջնորդանիստ եկեղեցում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Խաժակ արք. Պարսամյանի:

Նույն թվականից դասախոսել է «Սբ. Ներսես» ընծայարանում:

2000 թ. նշանակվել է «Սբ. Ներսես» ընծայարանի տեսուչ:

2003 թ. ստացել է մասնավոր վարդապետության 4 աստիճանները՝ պաշտպանելով թեզ՝ «եկեղեցու նավակատիքի հնագույն արարողությունը» թեմայով:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԵՐՍԵՍ Գ ՇԻՆԱՐԱՐ ՏԱՅԵՑԻ

## (641-661)

*Սկիզբը՝ էջ 3*

Ժողովը հավասարիմ մնաց Հայոց եկեղեցու հակաքաղկեդոնիկ ուղղվածությանը եւ համապատասխան որոշումներ կայացրեց, սակայն նրա նպատակն առավելապես եկեղեցու բարեկարգման խնդիրներն էին, որոնց մասին 12 կանոններ ընդունվեցին, որոնք, ինչպես նշեցինք, մտան Կանոնագրքի մեջ։ Առաջին չորս կանոնները վերաբերում էին եպիսկոպոսներին, որոնց հրամայվում էր ապրել սրբությամբ ու արդարությամբ։ Եպիսկոպոսները չպետք է իրավունք բանեցնեին ուրիշի վիճակում, անգամ այնտեղ, որտեղ եպիսկոպոս չկար, իսկ կաթողիկոսի հրամանով պետք եղած գործողությունները կատարելու դեպքում՝ հասույթները պետք է մնային հիշյալ վիճակին։ Եպիսկոպոսները չպետք է իրարից վիճակներ հափշտակեին եւ իրենց վիճակի սահմանների խնդիրը պիտի լուծեին առանց բռնության։ Վանքեր եւ դպրոցներ այցելելիս՝ նրանք, բացի կերակուրից, ոչինչ չպետք է պահանջեին, իսկ տուգանքների գումարները ծախսեին կարիքավորների հոգսերը հոգալու եւ հիվանդանոցների պահպանության վրա։ Հինգերորդ կանոնը վերաբերում էր եկեղեցական հասույթներին եւ եկեղեցականներին պատվիրում էր գոհանալ որոշակի հասույթով։ Իրենց պարտականությունները չկատարող հոգեւորականները, հաջորդ կանոնով, երեք տարով զրկվում էին հասույթից։ Յոթերորդ կանոնը կարգադրում էր տղամարդուն կամ կնոջը, որի ամուսնուն գերեվարել էին, ամուսնանալ միայն յոթ տարի սպասելուց հետո, այլապես ավելի վաղ ամուսնանալու եւ առաջին ամուսնու վերադառնալու դեպքում՝ նրանք պարտավոր էին վերադառնալ առաջինի մոտ։ Ըստ որում՝ բոլոր պարագաներում միշտ ապաշխարանք էր նախատեսվում։ Ութերորդ կանոնն անժառանգ եկեղեցականների ունեցվածքի մասին էր, որոնց ժառանգորդը պետք է լիներ եկեղեցին, սակայն թույլատրում էր մերձավորներից ինչ-որ մեկի որդեգրումը եւ ժառանգ ճանաչելը, եթե նա քահանայանա։ Չքահանայանալու դեպքում՝ որդեգիրը մասնակի ժառանգորդ էր դառնում։ Վերջին չորս կանոնները վերաբերում էին իշխաններին եւ ազատներին, որոնք բռնություն են կատարում եկեղեցականների եւ կարոտյալների նկատմամբ։ Ժողովը հրամայում էր չոտնահարել եկեղեցիների, եկեղեցականների եւ երիցուհիների իրավունքները, չհափշտակել նրանց հասույթները, նրանց վրա հարկեր եւ տուրքեր չդնել, վանքերի մեջ բնակություն չհաստատել եւ այլն եւ այլն։

Ներսեսը եկեղեցու մեջ երգված շարականները պարտավորյալ կանոնի վերածեց։ 645 թ. ժողովի որոշմամբ՝ պետք է ընտրվեր միայն արժանավորը, եւ միայն այդ ուսուցանվեր։ Շարականների ընտրության գործը հանձնարարվեց Շիրակի դպրեվանքի առաջնորդ Բարսեղ Ճոն վարդապետին, որը հռչակված էր իր մեծ հմտությամբ եւ սրբակրոնությամբ։ Առաջին ընտրությունը, որ հայտնի է Ճոնընտիր անունով, հաստատվեց Ներսես Գ-ի հրամանով, իսկ հետագայում դրանց վրա ավելացվածները մշտապես հաստատվում էին Հայոց կաթողիկոսների կողմից։ Ներսեսի հրամանով՝ բոլոր եկեղեցիներում միեւնույն օրը միեւնույն շարականները պետք է երգվեին, իսկ նրա ընտրած հմուտ երաժշտագետները եւ հմուտ պաշտոնյաները պետք է պտտեին երկրով մեկ, տարածեին Ճոնընտիր շարականները եւ սովորեցնեին երգեցողությունները։



645 թ. Դվինի ժողովի որոշումներն առավել զորացրին հակաքաղկեդոնականությունը Հայաստանում։ Եզրի կողմից Հերակլի Հավատի գիրն ընդունելը, որ դիտվում էր քաղկեդոնականությանն արված զիջում, իրականում ոչ մի կարեւորություն չունեցավ ո՛չ Եզրի հայրապետության շրջանում, ո՛չ էլ Ներսես Գ-ի կաթողիկոսության սկզբնական տարիներին։ Զիջողության էությունը քաղկեդոնականների հետ հոգեւոր հաղորդակցությանը հավանություն տալն էր, բայց ոչ քաղկեդոնականության ընդունումը։ Իսկ դա թույլատրվում էր Հայոց եկեղեցու կողմից։ Սակայն հայերը շուտով սկսեցին մերժել հույների հետ հաղորդակցությունը՝ խորշելով նրանց պատարագից եւ թույլ չտալով հույներին մասնակցել իրենց պատարագին։ Հասկանալի է, որ դա հասկապես մեծ դժգոհություններ առաջ բերեց Հայաստանում գտնվող հույն զինվորականների շրջանում, որոնք գանգատներով հեղեղեցին կայսերական արքունիքը՝ առաջ բերելով վերջինիս զայրույթը։ Բյուզանդական արքունիքը դա դիտեց որպես Հավատի գրի, այլ խոսքերով՝ Հերակլ կայսեր եւ Եզր կաթողիկոսի միջեւ կայացած համաձայնության խախտում։ Կոստանդին կայսրը եւ Պոլսի պատրիարք Պյուռոսը հրամաններ ուղարկեցին Ներսես Գ-ին եւ Թեոդորոս Ռշտունուն՝ պահանջելով, որ հավատի հարցերում միաբան լինեն հռոմների, այսինքն՝ հույների հետ, եւ հայազգի գիտնական Դավիթ Բագավանցուն ուղարկեցին Հայաստան, որպեսզի նա հայերին ետ պահի հույների հետ դավանաբանական հակասություններից։ Վերջինս Դվին ժամանեց կայսերական հրովարտակով ու պատրիարքական կոնդակով եւ պահանջեց, որ Հայոց կաթողիկոսն ու սպարապետն ընդունեն Քաղկեդոնի ժողովի որոշումները։ Ինչպես եւ պետք էր սպասել, հայ հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդները հրաժարվեցին որոշման ծանրությունն իրենց վրա վերցնելուց եւ, Սեբեոսի հաղորդմամբ, Դվինում հատուկ ժողով գումարեցին 648 թվին, որին մասնակցեցին բոլոր եպիսկոպոսները եւ բազմաթիվ նախարարներ։ Ինչպես նշում է Սեբեոսը, ժողովը հրավիրվել էր Կոստանդին կայսեր՝ Հայաստան գալուց 4 տարի առաջ, որը ճշգրտորեն համապատասխանում է 648 թվականին։ Ցավոք, մասնակիցների մասին մանրամասնություններ չեն պահպանվել։ Մեզ հայտնի չեն ժողովին մասնակցած եպիսկոպոսների քանակը, մասնակիցների անունները, հայտնի է, որ մասնակիցներից էր Թեոդորոս Ռշտունին, սակայն ոչինչ հայտնի չէ Սմբատ ասպետի՝ Սմբատ Խոսրովշումի թոռան մասնակցության մասին։ Հավանաբար նա Հայաստանից հեռացել էր, քանի որ նրա պաշտոնավարությունը հայրենիքում միայն դժգոհություն էր հարուցել հայ նախարարության շրջանում։ Ժողովը չհամաձայնվեց կայսեր եւ պատրիարքի առաջարկներին եւ որոշեց պատասխան նամակ պատրաստել։ Վերջինս ամբողջությամբ տեղ է գտել Սեբեոսի երկասիրության մեջ եւ, պատմիչի խոսքերով, եղել է ճշմարիտ եւ ուղղադավան։

*Շարունակելի*

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ԵՐԱՆԻ սրտով մաքուրներին

### Պարզ մեկնություններ պատանիների համար



Հակոբ Հակոբյան. Երեւան. 1970

*Սկիզբը՝ թիվ 10-14*

Ովքե՞ր են մաքուր սիրտ ունեցողները։ Մաքուր սիրտ ունեցողները նրանք են, ում մեջ բոլորովին չարություն չկա. նրանք ո՛չ նախանձում են, ո՛չ ատում, ո՛չ բարկանում, ո՛չ արհամարհում, ո՛չ կեղծում ու խաբում, ո՛չ վրեժխնդիր լինում։ Այսինքն՝ մաքուր սիրտ ունեցողը դարձյալ կատարյալ առաքինի մարդն է, ով ապրում է Աստծո պատվիրաններով։

Գիտե՞ք՝ ովքեր են սուրբերը։ «Սուրբ» բառը նշանակում է մաքուր, ուստի սուրբերը նրանք են, որոնց սիրտը մաքուր է։ Իսկ ինչի՞ց է մաքուր. բոլոր տեսակի մեղքերից կամ վատ հատկություններից։ Բոլոր քրիստոնյաներն էլ պիտի ձգտեն սուրբ դառնալ, այսինքն՝ մաքուր սիրտ ունենալ։ Աստված մեզ պատվիրում է. «Սո՛ւրբ եղեք, որովհետեւ ես սուրբ եմ»։ Ուրեմն՝ սուրբ լինելը պատվեր է, եւ բոլոր քրիստոնյաներն էլ անցնում են այն ճանապարհով, որը տանում է դեպի սրբություն։

Սակայն այդ ճանապարհը «նեղ» է. այսպես է ասում Տեր Հիսուսը։ Այն դժվար է անցնել, սակայն, միեւնույն է, Քրիստոսին հավատացողը նրանով պե՛տք է անցնի, քանի որ Տեր Հիսուսն է այդպես ասել. *«Նեղ դռնո՛վ մտեք. քանզի դեպի կորուստ տանող դուռը լայն է, եւ ճանապարհն՝ ընդարձակ, եւ շատերն են մտնում այդ դռնով։ Իսկ դեպի կյանք տանող դուռն անձուկ է, եւ ճանապարհը՝ նեղ, եւ քչերն են դրանք գտնում»։* Այս խոսքերը նույնպես մաս են կազմում «Լեռան քարոզի»։ Իսկ մի ուրիշ տեղ էլ, դարձյալ «Լեռան քարոզում», Տեր Հիսուսն ասում է. *«Կատարյա՛լ եղեք, ինչպես ձեր երկնավոր Հայրն է կատարյալ»։*

Ուրեմն՝ բոլոր քրիստոնյաներն էլ պիտի մտնեն նեղ դռնով եւ անցնեն նեղ ճանապարհով, բոլորն էլ պիտի քայլեն դեպի կատարելություն կամ սրբություն։ Սակայն ճիշտ այն պատճառով, որ դժվար է բոլորովին կատարյալ լինելը, շատ քիչ մարդիկ են դառնում իսկապես «սրտով մաքուր» կամ սուրբ։ Բոլոր սուրբերն էլ չափազանց դժվար, նեղություններով լի կյանք են ապրել։ Նրանք միշտ պայքարել են իրենց վատ հատկությունների դեմ եւ ի վերջո մաքրվել դրանցից՝ անշուշտ Աստծո օգնությամբ ու զորությամբ։ Քանի որ, եթե Աստված մարդուն չօգնի, մարդը չի կարող ինքնուրույն կերպով մաքուր սիրտ ձեռք բերել։ Միայն Աստված է, որ կարող է մարդուն մաքրել։ Բայց Աստված էլ մաքրում է նրան, ով շատ ցանկանում է, շատ աղոթում եւ ջանք թափում մաքրվելու։

Թեեւ կատարյալ մարդիկ քիչ են, սակայն, ինչպես արդեն ասվեց, բոլո՛ր քրիստոնյաները պիտի ջանան կատարել Աստծո բոլո՛ր պատվիրանները՝ ամեն մեկն իր կարողության սահմաններում։ Եվ բոլորն էլ իրենց կատարած բարի գործերի կամ ձեռք բերած մաքրության չափով էլ կվարձատրվեն Աստծուց։

<u>Աստծուն տեսնելը</u>

Իմացանք, թե ովքեր են սրտով մաքուրները։ Իսկ ի՞նչ է նրանց երանությունը. դա Աստծուն տեսնելն է. *«Երանի սրտով մաքուրներին, որովհետեւ նրանք Աստծուն կտեսնեն»։*

Մենք Աստծուն չենք տեսնում, եւ ինչպես գրված է «Աստվածաշնչում». *«Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել»։* Աստված միշտ մարդկային կերպարանքով է հայտնվել արդարներին եւ խոսել նրանց հետ, կամ էլ լսել են միայն Նրա ձայնը, իսկ կերպարանքը չեն տեսել։ Ինչո՞ւ։ Որովհետեւ Աստված հոգի է, մեզ նման մարմին չէ։ Մարդիկ տեսել են մարդու կերպարանքն առած, մարդ դարձած Հիսուսին, Ով Աստծո Որդին է։ Սակայն Նրա Հորը կամ Սուրբ Հոգուն ոչ ոք չի տեսել այնպիսին, ինչպիսին կան իրականում։ Իսկ այժմ նաեւ Հիսուսին չենք կարող տեսնել, քանի դեռ Նա երկրորդ անգամ չի եկել երկիր։ Սրտով մաքուրները, կատարյալ մարդիկ այս աշխարհում Աստծուն տեսնում են իրենց մաքուր սրտում։ Տեսնում են այն պատճառով, որ իրենք էլ են սկսում նմանվել Աստծուն։ Քանի որ Աստված մաքուր է, եւ Նրա մեջ ոչ մի չարություն չկա, այն մարդը, ով նույնպես մաքրվում է չարությունից, սկսում է հոգով նմանվել Աստծուն։ Եվ հենց իր հոգում էլ տեսնում է Նրան, ոչ թե մարմնի աչքերով, այլ հոգու։

Սակայն սրտով մաքուրները այս աշխարհի վախճանին արդեն նաեւ մարմնի աչքերով պիտի տեսնեն Աստծո Որդի Հիսուսին։ Իսկ ով տեսնում է Հիսուսին, տեսնում է եւ Նրա Հորը։ Մի անգամ, երբ Փիլիպպոս առաքյալն ասաց Հիսուսին. «Տե՛ր, ցո՛ւյց տուր մեզ Հորը, եւ դա բավական է մեզ», Հիսուսը պատասխանեց. *«Փիլիպպո՛ս, այսքան ժամանակ ձեզ հետ եմ, եւ չճանաչեցի՞ր Ինձ։ Ով Ինձ տեսավ, տեսավ Հորը»։*

Սուրբ Հովհաննես առաքյալը գրել է, որ երբ Հիսուսը գա, եւ արժանանանք հավիտենական ուրախալից կյանքին երկնքի արքայության մեջ, ահա այդ ժամանակ Աստծո նման ենք լինելու (Նրա նման գեղեցիկ, լուսավոր ու անմահ, ամբողջապես բարի ու կատարյալ), որովհետեւ Նրան տեսնելու ենք այնպես, ինչպես կա։ Հովհաննես առաքյալը շարունակում է. *«Եվ ամեն ոք, ով այս հույսն ունի* (այսինքն՝ Տեր Հիսուսին իսկապես տեսնելու հույսն ունի), *իրեն մաքրում է, ինչպես Նա է մաքուր»։* Տեսնո՞ւմ եք, որ առաքյալն էլ է ասում, որ միայն մաքուրները կտեսնեն Աստծուն։ Եվ քանի որ Նա լույս է, արեւից էլ լուսավոր, ինչպես այն ժամանակ, երբ Տեր Հիսուսը Թաբոր լեռան վրա պայծառակերպվեց, ապա մաքուր սիրտ ունեցողները, արդարները, սուրբերը, կատարյալները նույնպես Նրա նման լուսավոր են լինելու. ինչպես Տեր Հիսուսն է ասում, *«արդարները երկնքի արքայության մեջ արեգակի պես փայլելու են»։* Պողոս առաքյալն էլ է ասում, որ մենք այստեղ՝ այս կյանքում, Տիրոջը տեսնում ենք ասես հայելիով, իսկ այնտեղ՝ այս աշխարհի վախճանին, երկնքի արքայության մեջ, Նրան տեսնելու ենք դեմհանդիման։ «Հայելին» հենց մարդու մաքուր ու բարի սիրտն է, որի մեջ այս կյանքում արտացոլվում է Աստծո գեղեցիկ պատկերը։

*Թերեւս նկատեցիք, որ թե՛ խոնարհները, թե՛ սրտով մաքուրները, թե՛ արդարները, թե՛ ողորմածները, սրանք բոլորն էլ այն մարդիկ են, ովքեր սիրում են Աստծուն եւ կատարում Նրա պատվիրանները, ո՛չ թե միայն մեկը կամ մի քանիսը, այլ, կարելի է ասել, բոլորը։ Նշանակում է՝ Տեր Հիսուսն Իր բոլոր «երանիներն» էլ տալիս է ճշմարտապես աստվածասեր ու սուրբ մարդուն։ «Երանիների» մեջ տարբերությունն այն է միայն, որ այս կամ այն «երանիի» մեջ ինչ-որ մի առաքինություն առավել է ընդգծվում։ Եվ եթե նկատեցիք, վարձատրություններն էլ են իրականում նույնը՝ երկնքի արքայությունը եւ այն ամենը, որ տրվելու է աստվածասերներին այդ արքայության մեջ։*

*Շարունակությունը՝ էջ 7*

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Մինչ մենք դեռ շարունակում ենք մետրոպոլիտ Անտոնի Սուրոժսկու «Տունն Աստծո» քարոզխոսության հրապարակումը, լուր առանք, որ նա օգոստոսի 5-ի գիշերը Լոնդոնում կնքել է իր մահկանացուն:

Մետրոպոլիտ Անտոնի Սուրոժսկին (ավազանի անունը՝ Անդրեյ Բորիսովիչ Բլում) ծնվել է 1914 թ. Լոզանում (Շվեյցարիա)՝ ռուս դիվանագետի ընտանիքում: 1917 թ. ընտանիքը տեղափոխվում է Ֆրանսիա: Ավարտում է Սորբոնի համալսարանի կենսաբանության եւ բժշկության ֆակուլտետները:

Մինչ, որպես ֆրանսիական բանակի բժիշկ, ռազմաճակատ մեկնելը՝ նա վանական կյանքի ուխտ է անում:

1943 թվականին ձեռնադրվում է կուսակրոն քահանա եւ մինչեւ 1948 թվականը շարունակում բժշկի իր պրակտիկան:

1963-ից եղել է Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարքության էկզարխը Արեւմտյան Եվրոպայում, իսկ 1974-ից՝ Սուրոժսկու թեմի առաջնորդը:

Որպես նշանավոր հոգեւոր հովիվ, քարոզիչ աստվածաբան (գիտությունների դոկտոր)՝ Սուրոժսկին լայն ճանաչում ունի ողջ քրիստոնյա աշխարհում:

Բազմիցս արժանացել է Ռուս Ուղղափառ եկեղեցու բարձր պարգեւների (10-ից ավելի մեդալների ու շքանշանների):

Խունկ եւ օրհնություն հանգուցյալի հիշատակին:

# ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԱՆՏՈՆԻ ՍՈՒՐՈԺՍԿԻ

# ՏՈՒՆՆ ԱՍՏԾՈ

*Սկիզբը՝ թիվ 10-14*

Մյուս կողմից էլ մենք գիտենք, որ մարդկային անկատարությունը հաճախ տանում է Սուրբ Գրքի նույնիսկ ամենապարզ փաստերի խեղաթյուրմանը: Այստեղ դեր ունի ոչ միայն անձի անըմբռնողությունը, այլեւ հաճախ քարոզչության այն ավերիչ, կործանարար անկատարությունը, որը խեղում է Քրիստոսի ուսմունքը կամ պատկերը: Եվ այստեղ է ահա, որ ուժի մեջ է մտնում տարանջատման միտքը՝ այլ մակարդակով: Սակայն այստեղ եւս մենք պետք է հիշենք, որ սա դեռ վերջը չէ: Եկեղեցում մենք խոսում ենք հերետիկոսության եւ հերձվածության մասին: Հերետիկոսությունը դավանաբանական կեղծ ուսմունքն է, իսկ հերձվածությունն այն է, երբ մարդկանց միջեւ առկա են տարաձայնություններ, բայց ոչ դավանաբանական խնդրի շուրջ, այլ ուրիշ պատճառներով: Սակայն եթե մենք խոսում ենք հերետիկոսության եւ հերձվածության մասին, ապա հենց դրանով էլ հաստատում ենք, որ ճշմարտությունից կամ միասնությունից շեղվածները դեռեւս մնում են քրիստոնյա: Չէ որ մենք հերետիկոսին կամ հերձվածողին չենք կոչում բուդդիստ, մուսուլման կամ հեթանոս: Որպեսզի լինես հերետիկոս կամ հերձվածող՝ նախ պետք է լինես քրիստոնյա: Եվ սա մենք հեշտությամբ մոռանում ենք մեր բանավեճերում: Այնուհանդերձ, շատ հետաքրքիր տվյալներ կան այս կապակցությամբ: Ես հիմա կբերեմ միայն երկու օրինակ, որպեսզի ձեզանից շատ ժամանակ ու ուշադրություն չխլեմ:

Առաջին օրինակը վերցված է հին քրիստոնեական գրականությունից՝ Հովհան Մոսխի «Հոգեւոր մարգագետին» գրքից: Նա պատմում է մի քանի դեպքերի մասին, որոնք սեպվեցին հիշողությանս մեջ, երբ առաջին անգամ կարդացի. դրանք հակառակ էին այն ամենին, ինչն ինձ մինչ այդ սովորեցրել էին, եւ այդ հակառակությունն էլ հենց ինձ ստիպեց խորհել:

Առաջին պատմությունն այն մասին է, թե ինչպես մի ազնիվ հոգեւորական մաքուր, սուրբ կյանքով հետեւում է ինչ-որ հերետիկական ուսմունքի: Նրա սարկավագը, որը բարեպաշտ ուղղափառ էր, խիստ ցավ է զգում, որ իր ավագերեցը, ճշմարիտ ավետարանական կյանքի՝ նման մաքուր, նման լուսավոր օրինակ լինելով, դավանաբանորեն հետեւում է կեղծ ուսմունքի: Եվ մի օր նա դրա մասին ասում է նրան: Հոգեւորականն առարկում է՝ ասելով, թե ինչպես կարող է նման բան պատահել. «Ամեն անգամ, երբ ես պատարագ եմ մատուցում, Ընծաների սրբագործումի պահին ինձ ծառայություն են մատուցում երկու հրեշտակ: Նրանք չէին կարող գործակցել հերետիկոսի հետ»: Ապա անկեղծորեն ավելացնում, որ ինքը նրանց անպայմանորեն կհարցնի, թե ով է ճիշտը՝ ի՞նքը, թե՞ սարկավագը: Եվ ահա պատարագի ժամանակ՝ Ընծաների սրբագործումից հետո, նա կանգ է առնում եւ դիմում հրեշտակին. «Իմ սարկավագը, որն ինձանից ավելի կրթված է, ասում է, որ ես հետեւում եմ կեղծ ուսմունքի, իսկ դուք ինձ հետ ծառայում եք: Ինչպե՞ս կարող է պատահել: Հրեշտակներից մեկը պատասխանում է. «Մենք ծառայում ենք քեզ Աստծո կամքով՝ հանուն քո մաքուր սրտի: Իսկ քեզ ոչինչ չէինք ասում, որովհետեւ մեզ հրամայված էր, որ քո սարկավագին չզրկեինք քո հանդեպ իր ճշմարիտ քրիստոնեական սերը տածելու եւ քեզ ուղիղ ճանապարհի վրա դնելու հնարավորությունից»:

Սա շատ բան է ասում. նախ այն, որ մենք պատասխանատու ենք մեկմեկու համար: Եթե մեզանից որեւէ մեկը ընկնում է այս կամ այն հանցանքի մեջ (եւ սա առաքելական խոսք է- Գաղատ. Զ 1), ապա մենք՝ ուղղափառներս, պետք է նրան ոչ թե վարկաբեկենք, այլ օգնենք՝ նրա ուշադրությունը հրավիրելով իր սխալների վրա եւ աշխատելով նրան հաղորդել ճշմարտությունը: Իսկ ճշմարտությունը մեծ մասամբ հաղորդվում է ոչ թե վեճերի միջոցով, այլ ինչ-որ ավելի վեհ մի բանի բացահայտման ճանապարհով: Ես հիշում եմ մի քարոզչի՝ Տիխոն պատրիարքի կիսասարկավագին, որը հեղափոխության սկզբներին քարոզում էր Ռուսաստանում: Նա ասում էր. «Երբ վեճի ես բռնվում անհավատի հետ, մի խոսիր ընդդեմ նրա, որովհետեւ նա կկամենա պաշտպանել իրեն եւ բոլոր ուժերով կփորձի հակաճառել քեզ՝ իրեն թաքցնելով այն ճշմարտությունից, որը դու կփորձես տալ: Խոսիր առավել վեհ բաների մասին, որպեսզի քո խոսքերի վեհությունն ու գեղեցկությունը նրան գերեն, եւ նա ձգտի դրանց... Մյուս կողմից էլ Հովհան Մոսխի պատմությունը մեզ սովորեցնում է, որ սրտի մաքրությունը հաճախ կարող է էակցվել մտքի որոշ խառնաշփոթությունների հետ, ուստի այդ իսկ պատճառով մենք չպետք է հեշտությամբ լքենք, դատենք մարդուն. հարկավոր է մեծ զգուշությամբ վերաբերել այլախոհներին:

Իսկ երկրորդ պատմությունն այսպիսին է: Մկրտված մեկը որոշ ժամանակ անց հայտնաբերում է, որ իրեն մկրտող հոգեւորականը հերետիկոս է: Նա դիմում է ուղղափառ եպիսկոպոսի՝ հարցումով. «Իմ մկրտությունը հավաստի պիտի համարե՞լ, թե՞ նա ինձ պղծել է»: Եպիսկոպոսը կանչում է մկրտող քահանային ու դիմում մկրտվողին. «Այս մարդն է քեզ մկրտել»: Եվ նա պատասխանում է. «Ո՛չ, ինձ մկրտել է մի լուսաճառագ այր՝ ձյունաճերմակ հագուստով, իսկ այս մեկին ես տեսել եմ ինձ մկրտելու ընթացքում, երբ նրան ինձանից քիչ հեռու բռնած պահում էին երկու խոժոռադեմ արարած»: Ես այս դրվագների պատմականությանը հիմա չեմ ուզում անդրադառնալ. իմ նպատակն է բացահայտել նրանցում արծարծված խնդրո առարկա եկեղեցական մտածումը:

Կուզենայի ավելացնել եւս մեկը: Եպիսկոպոս Անտոնի Խրապովիցկին, որը նախկինում եղել է Կիեւի մետրոպոլիտը, ինչպես նաեւ արտասահմանյան Սինոդական եկեղեցու հիմնադիրը, Ռուս եկեղեցու ամենաարմատական ու սահմանափակ աստվածաբանն էր: Հիշում եմ նրա հոդվածը, ուր նա ասում է, թե ո՛չ կաթոլիկներին, ո՛չ բողոքականներին չի կարելի համարել քրիստոնյա: Սակայն մեկ այլ հոդվածում էլ ասում է, թե ինչպես



հարյուրամյակից հարյուրամյակ փոխվել է եկեղեցու վերաբերմունքն իրենից հեռացած համայնքների նկատմամբ: Նա նշում է այն փաստը, որ եկեղեցին նվազեցրել է իր խստությունը հերետիկոսների հանդեպ ու հարց տալիս, թե ինչպե՞ս կարելի է դա բացատրել. մի՞թե եկեղեցում նվազել է ճշմարտության զգացումը, որ ավելի անտարբեր է դարձել նրանց նկատմամբ, ովքեր քարոզում են ոչ ճշմարիտությունը, կեղծը, կամ էլ՝ այլ կերպ պետք է բացատրել դա...

Ինձ թվում է՝ այդ բացատրությունը շատ կարեւոր է մեզ համար: Նա ասում է, որ առաջին հերետիկոսները մերժում էին քրիստոնեական հավատքի հենց հիմքերը: Նա, ով մերժում է Հիսուս Քրիստոսի Աստվածությունը, նա, ով մերժում է Նրա մարդ լինելը, ուղղակի մերժում է Մարդեղության հենց բուն էությունը, ուստի նաեւ քրիստոնեական հավատը: Սակայն, անցած ժամանակների տվյալներով, ճշմարտությունից շեղվելը տեղի ունեցավ կարեւոր, նշանակալից պատճառներով, բայց ոչ Քրիստոսին որպես Աստծո մարդեղացած Որդի ճանաչելու հավատից հեռանալով: Եվ հարյուրամյակների ընթացքում հերետիկոսներն իրենց հետ տարան առավելապես ուղղափառ հավատը: Այնպես որ եկեղեցին, որ դատապարտում էր ամենախիստ կերպով վաղ հերետիկոսներին, արդյունքում սկսեց հետագա դարերի հերետիկոսների նկատմամբ կիրառել ավելի մեղմ միջոցներ, քանզի նրանք ավելի շատ էին պահպանել ճշմարտությունը, ուղղափառ հավատը:

*Շարունակելի*

***Թարգմանությունը՝ Գոհար ՎԱՐԴԱՆՅԱՆԻ***

# ԵՐԱՆԻ *խաղաղարարներին*

*Սկիզբը՝ էջ 5*

«Խաղաղարար» նշանակում է խաղաղություն անող՝ հաստատող (խաղաղ+արար):

Երբ մարդիկ բորբոքված ու բարկացած խոսում են միմյանց հետ, երբեմն պետք է լինում մեկը, որ նրանց խաղաղեցնի: Երբ մարդիկ խռովում են միմյանցից, դարձյալ երբեմն կարիք է զգացվում մի միջնորդի, որ նրանց հաշտեցնի: Այդ միջնորդը խաղաղարար է: Երբ մեկն անհանգստանում է ինչ-որ բանի համար, տագնապում, կարիք է զգացվում նրան խաղաղեցնելու, ուրեմն այստեղ նույնպես խաղաղարարի կարիք կա: Այդպես էլ, երբ երկու երկիր կամ զորաբանակ պատերազմում են միմյանց դեմ, մի երրորդ պետություն, ասում են, «խաղաղարար զորքեր» է ուղարկում պատերազմի վայրը՝ այդ շրջանում խաղաղություն հաստատելու համար: Ահա այսպես խաղաղարարները պետք են այնտեղ, ուր խաղաղությունն ու անդորրը, հանդարտությունը, հավասարակշռությունը, սերը, բարեկամությունը խանգարվել են:

Երբ Տեր Հիսուսը ծնվեց, հրեշտակներն ավետիս տվեցին մարդկանց՝ երգելով. *«Փա՜ռք Աստծուն բարձունքներում, երկրի վրա՝ խաղաղություն եւ մարդկանց մեջ՝ բարեհաճություն»:* Ինչո՞ւ ասացին. «երկրի վրա՝ խաղաղություն»: Որովհետեւ Տեր Հիսուսը ծնվել էր, որպեսզի Աստծուց իրենց չար գործերով հեռացած ու թշնամի դարձած մեղավոր մարդկանց հաշտեցնի Հայր Աստծո հետ: Մարդիկ իրենց մեղքերով ետ էին դարձել Աստծուց եւ տրտմեցրել Նրան: Հիսուսը եկել էր, որպեսզի մարդկանց սովորեցնի մեղքից ու չար գործերից հեռանալու ճանապարհը, Իր կյանքով եւ մարդկանց համար մեռնելով՝ ցույց տա այն մեծ սերը, որն Աստված ունի մարդկանց հանդեպ: Տեր Հիսուսը՝ Աստծո Որդին, այսպիսով, միջնորդ դարձավ Աստծո եւ մարդկանց միջեւ: Եվ, այս առումով, Նա ամենամեծ Խաղաղարարն է: Բացի այդ, Նա խաղաղարար է նաեւ Իրեն հավասացող յուրաքանչյուր անձի համար: Նա Իրեն հավատացող եւ Իր պատվիրաններին համաձայն ապրող մարդկանց հոգուն շնորհում է շատ մեծ խաղաղություն, երկնային խաղաղություն: *«Իմ խաղաղությունն եմ թողնում ձեզ,-* մի անգամ ասաց Նա Իր աշակերտներին, որով եւ՝ մեզ բոլորիս,- *Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ»:*

Նրա խաղաղությունը տրվում է այն մարդկանց, ովքեր շատ սիրում են Նրան եւ ջանում ամեն ինչ անել այնպես, որ Նրան հաճելի լինեն: Եվ այսպիսի մարդիկ, իրենց մեջ ունենալով Հիսուսի խաղաղությունը, այն կարող են փոխանցել նաեւ ուրիշներին: Ինչպե՞ս. իրենց բարի վարքով, բարի խոսքերով, բարի գործերով եւ նույնիսկ արտաքուստ ոչինչ չանելով, սակայն աղոթելով այն մարդկանց համար, ովքեր կարիք ունեն խաղաղվելու, իրենց վշտերից թոթափվելու, մխիթարվելու: Նրանք աղոթում են ամբողջ աշխարհի խաղաղության համար: Ուրեմն՝ Հիսուսին սիրող եւ Նրա խաղաղությունը ստացած մարդիկ իրենք էլ Հիսուսի՝ Աստծո Որդու նման դառնում են խաղաղարար: Նախեւառաջ հենց այսպիսի խաղաղարարներին է Տեր Հիսուսը երանի տալիս: Իսկ քանի որ այսպիսի խաղաղարարները նմանվում են Տեր Հիսուսին, ապա ժառանգում են նաեւ Նրա անունը՝ «Աստծո որդի»: Ահա այս մասին էլ ասում է Տեր Հիսուսը. *«Երանի խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծո որդի կկոչվեն»:*



**Հակոբ Հակոբյան. Մարմաշեն. 1970**

Ովքե՞ր են Աստծո որդիները:

Բոլոր քրիստոնյաներն էլ, մկրտվելուց հետո, դառնում են *Աստծո որդի:* Սակայն հաճախ նրանք այնքան վատ վարք են ունենում, այնպես են իրենց հոգին ամեն տեսակ չարությամբ կեղտոտում ու տգեղացնում, որ վերածվում են անառակ որդու, ինչպես «Անառակ որդու» առակի միջի կրտսեր որդին:

Հիշո՞ւմ եք՝ նա ինչ ասաց, երբ վերադարձավ հոր մոտ. *«Հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ եւ քո առաջ, այլեւս արժանի չեմ քո որդին կոչվելու»:* Ճիշտ այսպես էլ մկրտությամբ իբրեւ Աստծո որդի ծնված քրիստոնյաներն իրենց վատ վարքի ու չար սրտի պատճառով կորցնում են «Աստծո որդի» լինելու եւ կոչվելու արժանավորությունը, այսինքն՝ այլեւս արժանի չեն «Աստծո որդի» կոչվելու: Մինչդեռ երբ ապրում են Աստծուն հաճելի կերպով եւ օրեցօր իրենց սրտում աճեցնում Քրիստոս Աստծո հանդեպ սերը, ձեռք բերում մաքուր սիրտ, դառնում են Աստծո իսկական եւ սիրելի որդիներ: Դատաստանի օրը, երբ արդար քննություն լինի բոլոր մարդկանց գործերի, նույնիսկ մտքերի ու ցանկությունների, Տեր Հիսուսը պիտի դատի եւ Իրենից հեռացնի նաեւ վատ վարքով ապրած շատ քրիստոնյաների՝ մկրտությամբ Աստծո որդիների: Այդ ժամանակ այսպիսի մարդիկ այլեւս չեն կոչվելու Աստծո որդիներ, մինչդեռ արդարացած քրիստոնյաներն արդեն վերջնականապես պիտի կոչվեն «Աստծո որդի» եւ այդ որդիությունն այլեւս երբեք չեն կորցնի:

*Շարունակությունը՝ էջ 8*

